

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՍԿԶՔԱՂՔՅՈՒՐ

Հայ-իրանական քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերը հազարամյակների պատմություն ունեն։ Թեև շատ բան է արվել այդ կապերի ուսումնասիրության ուղղությամբ, բայց դեռ կան չուսումնասիրված կամ թերի լուսաբանված բազմաթիվ էջեր ու դրվագներ։ Համոզված եմ, որ մոտ ապագայում այդ ամենը ի մի կբերվի ու կստեղծվի բազմաճատոր աշխատություն։ Ապագա պատմաբանների գործը մասամբ դյուրացնելու նըպատակով ցանկանում եմ ներկայացնել ոչ հեռու անցյալում հայ-իրանական մշակութային համագործակցության մի դրվագ, որը, իմ խորին համոզմամբ, այսօր էլ չի կորցրել իր պատմա-իմացական արժեքն ու կարևորությունը։

Նադիր շահի կյանքը, գործունեությունը, Իրանի պատմության մեջ նրա խաղացած քաջասիկ դերը, հայ եկեղեցու, մասնավորապես Աբրահամ Կրետացի կաթողիկոսի հանդեպ նրա դրսևորած արտակարգ համակրալից վերաբերմունքը վաղուց հայտնի են ինչպես պարսկական ու հայկական արժանահավատ սկզբնաղբյուրներից¹, այնպես էլ տարբեր լեզուներով հրատարակված պատմագիտական հարուստ գրականությունից։ Սակայն նրա բազմաբնույթ գործունեության մեջ կա մի դրվագ, որը, իմ կարծիքով, պատմագիտական գրականության մեջ ցարդ արժանացել է միակողմանի և ըստ էության ոչ ճիշտ գնահատության։ Խոսքը կրոնների հանդեպ նրա դրսևորած վերաբերմունքի մասին է։ Հանրահայտ է, որ 1736 թ. մարտի 10-ին Թահմազ դուլի խանը Մուղանի դաշտում մեծ շուքով ու հանդիսավորությամբ թագադրվելով Իրանի շահ, որպես իրատես քաղաքական գործիչ, քաջ հասկանալով կրոնադավանաբանական պայքարի քաղաքական խորքն ու պատճառած վնասները, ներկա գտնվող մահմեդական հոգևոր առաջնորդներին հանձնարարեց մի կողմ թողնել կրոնադավանաբանական թշնամանքը և ապրել հաշտ ու համերաշխ։ Առանձին պատմաբաններ պարսից արքայի այս քայլը գնահատել են որպես սուսնահամի և շիիզմի միջև եղած տարբերությունների վերացման ու միացման ձգտում²։

Առավել միակողմանի և կանխակալ գնահատականի է արժանացել համաշխարհային մյուս կրոնների՝ քրիստոնեության և հուդայականության հանդեպ Նադիրի դրսևորած վերաբերմունքը։ Չճշելով սկզբնաղբյուրը, Ս. Քիշմիշը գրում է. «Հնդկաստանից վերադառնալուց հետո, 1741 թ. մայիսին Նադիրը, ցանկանալով մոտիկից ծանոթանալ քրիստոնեական կրոնին, հրամայեց պարսկերեն թարգմանել Նոր կտակարանը և չորս ավետարանիչների գրքերը, նույնը արեց նաև Թալմուդի համար։ Այդ ձևով ուսումնասիրելով բոլոր կրոնները, նա մտադիր էր ստեղծել մեկ միասնական կրոն, որի հովանու տակ աշխարհը կկարողանար բարվոք ապրել»³ (ընդգծումն իմն է— Ն. Մ.)։

Հենվելով Ս. Քիշմիշի այս եզրակացության վրա, Լեոն ավելի կտրուկ դատողություններ է անում Նադիրի այդ ձեռնարկման մասին։ Նա գտնում է, որ Նադիրը «մտադիր էր աշխարհում, գեթ իրեն հպատակված աշխարհում, հաստատել ամենքի՝ քրիստոնյայի,

¹ Տե՛ս օրինակ՝ Միրզա Մուհամմադ Մեհդի խան Աստաբադի, Թարիխ-ե Անդերի, Թավրիզ, 1869 (պարսկերեն), Աբրահամ Կրետացի, Պատմագրությունն անցիցն իրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870։

² Տե՛ս օրինակ՝ Ս. Օ. Кишмишев, Походы Надиршаха в Герат, Кангалар. Ил-дью и события в Персии после его смерти, Тифлис, 1889, էջ 210։ Լեոն, Երկերի ժողովածու, տասը հատորով, երրորդ հատոր, Երևան, 1978, էջ 221։

³ Ս. Օ. Кишмишев, նշվ. աշխ., էջ 210։

մահմեդականի թե հրեայի համար մի կրոն: Եվ այնքան լուրջ էր նա վերաբերվում այս մտքին, որ նույնիսկ հրամայեց թարգմանել թե քրիստոնեական Ավետարանը և թե հրեական Թալմուդը, որպեսզի կարելի լինի քննել բոլոր կրոնները և նրանց միացման համար հիմքեր մշակել: Սակայն մոռանում էր մեծ նվաճողը, թե թողվ և արյունով անկարելի է մարդկանց միատեսակ մտածողության բերել»⁴: Իրականում պարզվում է, որ Իրանի շահը բնավ մտադրություն չի ունեցել ստեղծելու այսպես կոչված միասնական կրոն, այլ պարզապես ցանկացել է իմանալ, թե ի՞նչ ընդհանրություն ու տարբերություն կա Ռիշյալ կրոնների միջև: Զե՛ որ նրա ստեղծած հսկայածավալ կաշարության մեջ ապրում էին գրեթե բոլոր կրոնների ու դավանանքների ներկայացուցիչներ, որոնց միջև սովորական էին կրոնական ու դավանաբանական տարաձայնությունները, վեճերն ու կոիվները, որոնք հարթելու համար հաճախ ստիպված էր լինում միջամտելու հենց ինքը՝ շահը: Իսկ ինչպես կարող էր շահը, թեկուզ նա լիներ Նադիրի նման ռազմական հանճարի և ուժի տեր մեկը, հարթել այդ վեճերն ու կոիվները, առանց իմանալու յուրաքանչյուր կրոնի այբուբենը, մյուսների հետ նրա ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները: Ինքնըստինքյան հասկանալի է, որ նա դա կարող էր անել միայն տարբեր կրոնների սուրբ գրքերը պարսկերեն թարգմանելու, պարսկերենով կարդալու, դրանք անձամբ հասկանալու անհասարկով: Որ իսկպաես այդ էր Նադիր շահի նպատակը և ոչ թե միասնական կրոնի ստեղծումը, մենք ունենք Նադիրի այդ ձեռնարկմանը անմիջականորեն մասնակցած, նրա ընդունելությանն արժանացած, անգամ լիուլի վարձատրված Հովսեփ Ջուղայեցու գրավոր վկայությունը, որը, ցավոք, առայժմ չի արժանացել մասնագետների ուշադրությանն ու գնահատությանը: Թե կրոնական այլևայլ գրքերի պարսկերեն թարգմանությունը գործնականում ինչ նշանակություն է ունեցել Նադիր շահի կենսագործած քաղաքականության համար, դժվարանում ենք պատասխանել այս հարցին, քայց որ դրանով նա մեծապես նպաստել է տարբեր կրոնների ներկայացուցիչների, մասնավորապես հայ և պարսիկ մտավորականների համագործակցությունը, փոխօգնությանն ու փոխազդեցությանը, վեր է կասկածից: Ի վերջո, թե ուրիշ մշակույթներում ինչ արժեքներ են ստեղծվել Ռիշյալ ձեռնարկման շնորհիվ, մենք առայժմ ոչինչ չգիտենք, քայց որ հայ մշակույթի համար դա ունեցել է արգասավոր նշանակություն, հաստատում է Հովսեփ Ջուղայեցու⁵ «ՔՐՃԻԿՐՆ» աշխատությունը, որի երկրորդ հատորի երեք գլուխը (ԻԶ—ԻԸ՝ 6—28) ծնունդ են Նադիրի այդ միջոցառման: Դրանցում հեղինակը ոչ միայն մասնակցի իրավունքով ներկայացնում է պատմական իրողությունը, հետաքրքիր մանրամասներ հայտնում Նադիրի բնավորության ու մտածողության մասին, այլև իբրև մշակութային գործիչ՝ ուշագրավ մտքեր ու դատողություններ է արտահայտում հայ մշակույթի զարգացման պատմական ընթացքի, այլ մշակույթների հետ նրա ունեցած աղերսների մասին:

Հովսեփ Ջուղայեցու «ՔՐՃԻԿՐՆ» աշխատության երկրորդ հատորը և առաջին հատորի վերջին յոթ գլուխը առկա են Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 1793, 4381 և 10001 ձեռագրերում, քայց դրանցից 4381 և 10001 ձեռագրերը հետագայի ընդօրինակություններ են, իսկ 1793 ձեռագիրը հեղինակի խնդրանքով քնօրինակից արտագրել է իր աշակերտ Գրիգորը: Վերջինս նույնպես ուսուցչի նման ստիպված էր եղել հայրենի Ջուղայից տեղափոխվել Բասրա, որտեղ և ստեղծվել է ինչպես Ջուղայեցու աշխատությունը, այնպես էլ խնդրո աղարկա ձեռագիրը, որը առանձին դեպքերում էապես տարբերվում է մյուս երկուսից: Օրինակ՝ միայն նրանում են պահպանվել ԻԸ գլխում Ռիշատակվող՝ Քրիստոսի տոհմաբանության գծագիրը, որը նույնությամբ բերում ենք իբրև հավելված:

Ընթերցողի դատին ներկայացվող հատվածները բերում ենք առանց էական փոփոխության: Ըստ անհրաժեշտության փոխել ենք միայն կետադրական նշանները և ուղղել ակնհայտ վրիպակները:

Հ. Ղ. ՄԻՔՋՈՅԱՆ

⁴ Լեո, նշվ. աշխ., էջ 222:

⁵ Հովսեփ Ջուղայեցու կյանքի, գործունեության և «ՔՐՃԻԿՐՆ» աշխատության գրության հանգամանքների մասին տե՛ս Հ. Ղ. Միքայելյան, 18-րդ դարի մի. անտիպ գրախոսություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, թիվ 3:

Վիպասանութիւնք, որ ի ժամանակս մեր եղեն
յարքայից արքայէն պարսից Նադրշայէն

Ի թուականութեանս հացոց հազար հարիւր նսուն և մի խրոխտ արքայն
արքայից Նադրշայ, առաքեաց զոմն այր իմաստնագոյն, որ կոչուի Միրզայ
Մէթի՛ աղիլի Իսպահան, եղեալ ընդ նմա և իշխան մի, թէ ուր ուրեք և գտցի
այր գիտուն և տեղեակ սուրբ գրոց, ի հայոց, և ի լատինացոց, ի պարսից,
և յեբրայեցոց հաւաքեսցէ ի միասին, զի արասցեն թարգմանութիւն ընդ
մեկնութեանց շորից գրքոցն: Այսինքն՝ Թուրաթին, որ է օրէնքն Մովսէսի,
և մարգարէական գրոցն և սրբոց շորից անտարանշացն, և իւրեանց գրքոյն
Ղուրանին, թարգմանեալ ի մի լեզու պարսկական բարից՝: Եւ եկեալ Միրզայ
Մէթին Իսպահան, յորում ժամանակի էր լուսահոգի Քազար կաթողիկոսն
Իսպահան, ի գիւղաքաղաքն մեր ի Ջուղայ, և խնդրէր այրս գիտունս ի կա-
թողիկոսէն: Եւ նա մտախոհ եղեալ ի վերայ այսր գործոյն, գիտաց հոգի
իւր, եթէ ծանր է բանս այս, եղ զԳէորզ վարդապետն և զնուաստութեան
իմոյ զՅովսէփ քահանայս ի ձեռն նորա և ինքն գրեթէ փախստական՝ ել ի
Ջուղայու: Գէորզ վարդապետն էր տեղեակ արտաքնոց և փիլիսոփայական
գրոց, զոր յոյժ հաճեն ընդ այս կարդացողք յազգէն պարսից, այլ և էր գի-
տակ օրինաց: Եւ ես էի տեղեակ թուոց և ժամանակաց, և գիտակ լեզուի
յունաց և լատինացոց, և մեկնութեան սուրբ գրոց: Եւ ամ մի օր աւուր գը-
նացեալ մեր առընթեր Միրզայ Մէթէին ի թարգմանել գրոցն և ի մեկնու-
թիւն գրեցելոցն, և պատասխանատրութիւն լատինացոց եպիսկոպոսին Փի-
լիպպոսի և պատրեացն, այլ և եբրայեցոց գիտակի օրինացն, և պարսից
իմաստական գիտնոց: Օրհնեալ է լուսատուն իմ Յիսուս, զոր թէպէտ մեկ-
նիչք սուրբ գրոց, թէ մեք և թէ լատինք տանէինք առ ի պատասխանատրու-
թիւն նրաքննին բանից նորա, բայց ի մեկնւաց գրոց օգուտ ինչ ոչ գոյր:
Զի մեկնիչք սուրբ գրոցն առանց առընթեր ներհակացն են արարեալ զմեկ-
նութիւնս, և զոր ինչ ծանր է թուեալ գիտակ լինելոյ, զանց են արարեալ:
Իսկ զմերն, ունէաք ներհակ իմաստնագոյն Միրզայ Մէթին հանդերձ կար-
դացողօքն պարսից, և լատինք, և եբրայեցիք, յոյժ դժուարին էր գործն: Այլ
սուրբ հոգին տնօրինէր զայն առ մեզ, զի զամենայն զոր ինչ հարցանէին
շնորհք նորին տնօրինէր ի միտս մեր և ասէաք զայն առաջի Միրզային և
ուրախանայր առ մեզ, ընդ իմ ևս սիրէր զիս յոյժ սակս ճշմարտախօսու-
թեան իմոյ: Եւ յիշեցաք անդ զքան տեառն Յիսուսի կենսատուին մերոյ, եթէ
ուր իցեն երկուք և երեք ժողովեալք ի միասին վասն անուան իմոյ, անդ եմ
և ես ի մէջ նոցա: Եւ եթէ որքան նրաքննութիւն առնէր Միրզայն, զմի և
եթ պատմեցից: Առեալ ի ձեռն զգիրս Ելիցն և ընթեռնոյր զգլուխ գրոյն, որ
էր այսպէս ըստ լեզուի արաբացոց. Որդիք Յակոբայ Ռուբէն, Շմաւոն, Ղևի,
Յուդայ, Իսաաքար և Զարուղօն, Յովսէփ և Բենիամին, Գան և Նեփթաղիմ,
Գադ և Ասեր: Եւ սկսաւ Միրզայն եբրայեցոցն հարցանել եթէ ընդ՞ր է այս,
զի զանուանս հնգից գրէ, յետոյ և Զարուղոն, և յետոյ երկու երկու դնէ
զվերջ միոյ միոյ նոցին ևս գրէ և: Եւ ճշդիւ պահանջէր գիտենալ զայն ի
նոցանէ: Եւ ոչ կարացին ասել զմեկնութիւն և-ին, զոր յոյժ բարկանայր ի
վերայ նոցա: Եւ ես սկսայ խնդրել հրաման, զի ասիցեմ զմեկնութիւնն, և
հրամայեաց, թէ ասա: Մանուցի նմա, թէ Յակոբ շորս կին ունէր. առաջին
կնոջէն կիայ՝ վեցէքին որդիք նախագրեալն, որ ի վերջանալն դնէ և, զի
և միւս կնոջէն Ռաբելայ երկու, և միւս աղախնոյն երկու, և միւս աղախնոյն
ևս երկու, զոր մի որդուց անուն տալով միւսին դնէ և: Եւ լուեալ Միրզային,
ուրախանայր: Իսկ զմեր ազնւոյ կարդացողքն տրտնջեցին առ իս, ասելով՝
Մի՞թէ կամիս և զգրոցն Մովսէսի ի մեկնութիւնն պահանջել տալ ի մէնջ և

ծանրացուցեն զգործ մեր: Եւ խնդրեաց յինէն Միրզայն, եթէ զտոհմ տեառն փրկչին գրովք յայտ արա ինձ, գուցէ արքայն արքայից խնդրեսցէ յինէն, զայն ցուցից նմա: Եւ բոլորակօք ոսկէտուփ գրել ետու, և ետու իւրն: Այլ և խնդրեաց յինէն, եթէ ի սուրբ աւետարանոջն քաղաք և գեօղք, զոր յիշէ, և գետք և ծովք ուրանօր և ասէ, բացայայտութիւն նորին ի թղթով յայտ արա: զԱյն ևս ի լատին լեզուէ թարգմանեալ, տարածիւք և ասպարիզօք ըստ շափու, որպէս պարտն էր, ոսկէտուփ արարեալ, եղի առաջի իւր:

Եւ յետ միոյ ամի, բազմաւաստակ լինելոյն մեր, յորժամ դարձաւ արքայն արքայից յերկրէն Հնդկաց, զոր գրաւեալ էր իսկ ընդ բռամբ, հրաման եկն առ Միրզայ Մէթին, եթէ որք ի գործդ այդ գտեալք եղեն, առ ընդ քեզ և բեր ի քաղաքն Ղազբին առաջի իմ: Եւ ելեալ գնացաք երկիւղիւ և խնդութեամբ: Երկիւղիւ, զի օր ո՛չ գտանիւր առաջի նորա զրպարտանօք հեղձումն մեծամեծաց, և ակնահան լինիլ արանց պիտանեաց: Եւ խնդութեամբք, զի վաստակ մեր յանուն Տեառն Յիսուսի էր, և զիտէաք հաւաստեալ, զի փառաւոր առնէ տէր զփառաւորիչս անուան իւրոյ առաջի բռնակալից: Եւ իբրև տարան զմեզ առաջի նորա, արանց շորից հեղձամահ արար և միոյ զխաւորի նոցին զաշն հանել ետուր, որք էին իշխանք քաղաքին Շիրազայ: Եւ ապա մեք կացեալք առաջի նորա, Միրզայ Մէթին սկսաւ բազմահանճար իմաստութեամբ խօսել զմէնչ և զամենայն վաստակք վասն մեր, ծանոյց մեծի արքային, և Բարձրեալն քաղցրացոյց յոյժ զսիրտ նորա ի վերայ մեր: Եւ սկսաւ ասել ցմեզ՝ Մի է Աստուած, որ արար զամենայն, որ և ետ ինձ զմեծութիւնս զայս, նոյն ևս էարկ ի սիրտ իմ, զի զչորեաին գրեանքդ թարգմանեացի ի մի լեզու պարսկային, զի ամենեքին գիտակ լիցին սրբոց գրոց: Զի որպէս մի է աստուած, նույնպէս մի են իմացուածք ամենայն գրոց և օրինաց, և դուք որ վաստակեցաք ի վերայ գրքոցդ, ունիք շնորհս և վարձս լԱստուծոյ, այլև յինէն արդիւնս և օգտութիւնս բազում, և ի բանսն իւր երիցրս անգամ շնորհակալ եղև ի մէնչ: Եւ յետոյ եհարց՝ եթէ գոյ ի միջի դոցա գիտակ լեզուի թորգոմեան, և Միրզայն եցոյց զԳէորդ վարդապետն և կոչեաց զնա յառաջ, և տեղեկացեալ, գիտաց եթէ Զուղայու Սպահանու է, և ասաց. Յոյժ բարւոք արարիք և վաստակեցաք ի սուրբ գիրս, եկայք ընդ իս մինչև ի Դավրէժ, անդէն մեծաւ տրօք արձակեցից զձեզ: Եւ յետ աւուրց ալ իմն խորհուրդ մտեալ յարքայն, հրամայեաց տալ մեզ հարիւր թուման, որ է վերցհարիւր դրամ ոսկի, և ուրախութեամբ արձակեաց զմեզ: Եւ կատարեցաւ բանք դատաւորին Սամփսոնի, եթէ ել ի կերչէ կերակուր և ի հզօրէ քաղցր: Զայսոսիկ համառօտ ի ծերութեան իմում վտարանդեալ յօտար երկրի, զյոյժ սակաւն գծագրեցի աստ ի խնդրոյ սիրելեաց հարց և եղբարց ի փառս Քրիստոսի օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԳՆՈՒՆ ԻՒ

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ի սուրբ գրոց յայտարարութիւն առ ընթեր
Միրզային, մերձ գոլով և Երբայեցիք
գրովք իւրեանց

Թէպէտ բազում բանք և ասացուածք եղեն առաջի Միրզային, բայց զայս մի և եթ բանս, որ վասն Տեառն գրեցի աստ՝ առ ի իմաստնագոյն լինիլ ուսումնասիրաց ի փառաւորութիւն անուան Տեառն Յիսուսի: Յաւուր միում կոչեաց զմեզ Միրզայն առաջի իւր, նոյնպէս և կարդացողք երբայեցուց և եհարց մեզ, եթէ ցուցէք ինձ ի գրոցն երբայեցուց վասն Քրիստոսի վկայութիւն, զի գիտացից, եթէ ճշմարիտ են բանք ձեր: Եւ բերաք զԱստուածաշունչն մեր և լատինացուց, նույնպէս և զԱստուածաշունչն արաբացուց լե-

դուռն է հղի առաջի նորա: Եւ յայտ արարի Միրզային, եթէ գիրք երբայցեւոց երեք են, նախ զՔօրաթ, որ է օրէնք, հինգ հատոր, երկրորդ՝ գիրք զԲերէ ասարն, որ է մարգարէութիւնք, ութն հատոր: Եւ երրորդ՝ գիրք զՀաջիօգրաֆայն, որ է սրբագիրք, ինն հատոր: Եւ յինին այս երեք գիրքն քսաներկու հատոր ըստ շափու այրուբնից տառից իւրեանց և որ ոք ի վերայ գրոցս այսոցիկ հակառակ խօսիցի, կամ զմի փոքրագոյն բանսն շքնդունի, նզովիւք փակեն զնա: Յետ բանիցս այսոցիկ սկսաք սկիզբն առնել և բերել վկայութիւն ի նոցին գրոց, որ վասն տեառն Յիսուսի: Նախ զբանսն Յակոբայ նահապետին յօրհնութիւն որդւոց իւրոց, թէ զինչ իսկ ասէ առ Յուդայ որդին իւր այսպէս: Մի պակասեցի իշխան Յուդայ և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց: Կապեսցէ յորթոյ զյաւանակ իւր և զգնդակէ զյաւանակ իշոյն և լուսացէ գինեաւ զպատմուճան իւր և արեամբ խաղողոյ զհանդերձ իւր: Եւ խնդրեաց Միրզայն յերբայցեւոցն ընթեռնուլ և գիւրեանց Քօրաթն զտեղին այն, զի գիտասցէ զճշմարիտն: Եւ ընթերցեալ նոցա, առաւել ևս օգուտ եղև մեզ, զի գրեալն մեր մինչև եկեսցէ հանդերձեալն, նոցայն էր գրեալ մինչև եկեսցէ Մեսիայն, որ է Քրիստոսն: Եւ արարացւոց լեզուան ևս զոր կայր առաջի Միրզային, ինքնին ընթերցաւ զնոյն տեղին, զարմացաւ յոյժ և թափեաց արտասուս յոյժ յաշաց իւրոց: Եւ յետ այնորիկ բացաւ զգիրք երկրորդ Օրինացն ի տեղին, զոր ասէ՝ Օղիցին կեանք ձեր կախեալ առաջի աշաց ձերոց և զարհուրեսցես զցայգ և զցերեկ և ոչ հաւատասցիք կենաց: Զոր նոյնպէս և երբայցեւոց ետ կարդալ և ետես, զի մի և նոյն էր, և բազում առարկութիւն առ նոսա արար, թէ դուք ճշմարտիւ կուրացաք տեսանել զկեանս ձեր: Եւ ապա բերաք զբան ծայայեայ մարգարէին, եթէ Ահա կոյս յշացի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա էմամնուէլ և յայտ արարաք, եթէ էմամնուէլն թարգմանի ընդ մեզ Աստուած: Եւ երբայցիք ընդիմացան մեզ, եթէ այդ, որ առ արքայն Աքազ ասաց վասն Եզեկիայի որդւոյն նորին է: Եւ ես խնդրեցի թէ որպէս է գրեալ, եթէ Աքազ քանի ամ է թագաւորեալ, նոքա ասացին եթէ՝ վեշտասան: Եւ ես ասացի՝ Տեսէք զգիրք ձեր եթէ Աքազ յորժամ վախճանեցաւ, Եզեկիայ որդի նորա քանի ամաց էր, որ թագաւորեաց: Տեսեալ ասացին՝ քսանհինգ ամաց: Եւ եղեն ամօթալից առաջի Միրզային և ասաց՝ Ամենայն ի՞նչ սուտ էք դուք, զի մարգարեութիւնդ այդ առ Աքազ էր, որ Եզեկիայ ինն ամաւ յառաջ էր ծնեալ քան զթագաւորիլն Աքազու: Յետ որոյ ցուցաք զայն, որ ասէ՝ Ահա մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն եղև ի վերայ ուսոց՝ իւրոց և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած, հօր իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին: Եւ ի նոյն հարեալ ցուցաք զբան գրոցն Բարուքայ: Սա Աստուած մեր ընդ որում ոչ համարեսցի այլ: Եզիտ զամենայն ճանապարհս իմաստութեան և ետ զնա Յակոբու ծառայի իւրոյ և Իսրայելի, սիրելոյ իւրոյ, յետ այնորիկ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ: Եւ առ յապայ ցուցաք զմարգարէութիւն Զաքարիայ, որ ասէ. Ուրախ լեր յոյժ դուստր Սիօնի, քարոզեա դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գայ առ քեզ արգար և փրկիչ և հեծեալ ի վերայ իշոյն և յաւանակի նորոյ: Եւ յետ նորին ասէ մարգարէն. և դու արեամբ ուխտի քո արձակեցիր զկապեալս քո յանջրդի գրոյ: Յետ որոյ մօտ եղեալ իմ, բացի զԱստուածաշունչն արարացւոց յԵսայիայ մարգարէութեանն զուխ Մգ, զոր ասէ. Տէր, ո՛ հաւատաց լրոյ մերում, և հղի առաջի Միրզային ընթեռնուլ զբոլոր գլուխն: Եւ զվկայութիւն միւս ևս վասն շարչարանաց տեառն ցուցաք զբանք Սաղմոսին Իա զլուխն և ընթերցաւ զամենայն: Եւ իբրև եհաս ի տեղին յայն՝ Մակեցին զձեռս և զոտս իմ,

և թուեցին զամենայն ոսկերս իմ, նոքա հայեցան և տեսին զիս: Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին: Ասէ Միրզայն ցերրայեցիսն. *Զինչ քան զայս ևս վկայութիւն զՔրիստոսէ, զոր դուքդ ուրանայք և ոչ հաւատայք գրոց ձերոց: Եւ նոքա ասացին՝ Ի զիրս մեր ոչ է յադպէս գրեալ՝ եթէ ծակեցին զձեռս և զոտս իմ, այլ թէ առիւծունք⁴ ի վերայ ձեռաց և ոտից իմոց: Եւ Միրզայն ծիծաղեցաւ զնոքօք եթէ այդ բան մի չէ զոր ասէք դուք, երևի թէ թիւրեալ էք զբանք սուրբ գրոցն, զոր ինչ կամեցեալ էք փոփոխումն էք տուեալ, որպէս լինի առիւծունք ի վերայ ձեռաց և ոտից: Եւ ցնծացաւ և ուրախացաւ Միրզայն յոյժ վասն վկայութեանցն, զոր ցուցաք և պատիւ տայր մեզ առաջի ամենեցուն: Զի յամենայն յաւուր գային անդ առ Միրզայն արք մեծամեծք և պատուականք մեծի քաղաքին և ունկն դնէին բանից մերոց և մեկնութեան սրբոյ Աւետարանին և փառաւորէին զանուն տեառն Յիսուսի փրկչին մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:*

ԳԼՈՒԽ Դ


Յաղագս սրբոյ տոհմի Տեառն, զոր խնդրեաց ի մէջն Միրզայն զստոյգն ցուցանել ինքեան

Զայսմանէ զրեցաւ վերոյ, եթէ զայս ևս խնդրեաց Միրզայն, զի ասէր՝ Գուցէ արքայից արքայն խնդրիցէ զայդ յինէն, տեղեակ իցեմ այդմիկ: Եւ եպիսկոպոս և պատրիք լատինացւոց ոչ կարացին զպարզագոյն իմն զսուրբ տոհմին յայտ առնել Միրզային և ևս խոստացայ բոլորակօք շինել և բերել առաջի իւր և ցուցանել զամենայն մի ըստ միողչէ: Եւ զոր խոստացայ, զնոյն ևս ի կատարումն ետու, ի բազմաց զրոց լատինացւոց, յունաց և հայոց զհաւաստէն բոլորակօք շարահարեալ, գրեցի երկու կերպ: Մի զՏէր մեր և փրկչիչն աշխարհի սկիզբն եղի⁵, որ է սկիզբն ամենայնի և միւս կերպն զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որդոյն Աստուծոյ եղի ի միջի⁶, զի սա է պարունակող ամենայնի: Եւ ոսկէնկար արարեալ ի լեզու պարսից, գրել ետու ի մէջ բոլորակիցն և տարեալ եղի առաջի նորա: Եւ մի առ մի ցոյց ետու զսուրբ տոհմն և գրեաց մի ըստ միողչէ զասացեալն իմ ի լեզու պարսից և ուրախ եղև ընդ այն: Առ որ և աստ զնոյն բոլորակսն երկու կերպ գրեցաւ, զի որք ճշմարտութեան և գիտութեան են սիրողք, տեսցեն և գիտասցեն և ուրախասցեն ի վերայ սրբոյ տոհմի Տեառն մերոյ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Միրզա Մուհամմադ Մեհդի խան Աստարադի— Թահմազ Ղուլի խանի պալատում աշխատել է որպես հրովարտակներ, հրամանագրեր ու արտոնագրեր տվող, քայց Նադիրի շահ հռչակվելուց հետո շահը նրան ազատում է այդ պաշտոնից և հանձնարարում գրել իր պատմությունը: Մանրամասն նկարագրելով Մուղանի դաշտում Թահմազ Ղուլի խանի շահ հռչակվելու և նրա կողմից նոր պաշտունյալներ նշանակելու արարողությունները, Աքրահամ Կրետացին ի մասնավորի գրում է. «Միտիարեաց ևս զնակխիմ թախամ գրող Միրզէ Մեհրիմ, զոր ընկեցեալ էր յաչացն վասն պատմադի իմիք, և կարգեաց պատմաբան՝ գրել զպատմութիւն եղելոց իրար և վասն թագաւորելոյն իր» (Աքրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իրոց եւ Նատր-Շահիմ պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 70): Իսկապես Միրզա Մեհրիմ գրել է Նադիր Շահի կյանքի և գործունեության պատմությունը («Քարիխ-ե Նադիր», Թավրիզ, 1869), որը հիմք է հանդիսացել Նադիր շահի կյանքին ու գործունեությանը նվիրված հետագա շատ աշխատությունների համար:

² Ղազար Շահկեցի կաթողիկոսը (1737—1751 թթ.), ի տարբերություն նախորդ կաթողիկոս Աքրահամ Կրետացու, ընդհակառակն, արծանացավ Նադիր շահի անհարգալից վերաբերմունքին:



Փճագիր 1: Բնագրում այս և երկրորդ գծագրերը օղական են, միացման գծերը՝ ձևավոր, ցավոք, տեխնիկական հնարավոր չէ նույնությամբ ներկայացնել (հեղ.):

³ Հնագույն ձեռագրում (№ 1793) ամրնթեռնելի է, ճշտել ենք № 4881 ձեռագրով (տե՛ս էջ 378ա):

⁴ Հիմք ձեռագրում դժվարըթեռնելի է, կարդացվում է առիծիւնք: Ուղղել ենք № 4881 ձեռագրով (տե՛ս էջ 378բ):

⁵ Տե՛ս գծագիր 1:

⁶ Տե՛ս գծագիր 2:

Г. К. МИРЗОЯН — Ценный первоисточник из истории армяно-иранского сотрудничества. — Впервые публикуются 26—28-ые главы труда «Книжкон» видного деятеля культуры 18-го века Ованеса Джугаеци, где автор по праву участника представляет важную просветительскую инициативу Надир-шаха по переводу и комментариям Библии на персидский язык, делает оригинальные наблюдения относительно исторического хода развития армянской культуры, ее связей с другими культурами, а также о мышлении и характере Надира.

Публикации предпослано краткое предисловие, в котором делается попытка пересмотреть укоренившуюся в историографии точку зрения относительно религиозных пристрастий персидского владыки, оценивает значимость публикуемого материала для изучения истории армяно-иранских культурных взаимоотношений.